առնելով զմեզ անպատմելի ուրախութեամբ լցուցիլ է, մխիթարելով և յորդորելով զմեզ իւրեան պատուական քարոզութիւններովն։

Այլևս վերջապէս կու խնդրինք միաբան քահանայիւքն և ժողովրդեամբն, որ զմեր քաղաքն ի միասին հասարակութեամբն միշտ աղօթից չի մոռանաք ձեր տէրութեանը սուրբ և աստուածաբնակալ մաղթանացը մէջ, որ աստուած պահէ և պահպանէ զմեզ ամենայն փորձանաց, թէ հոգևոր և թէ մարմնաւոր, և պարգևեսցէ զսէր և զմիաբանութիւն առ միմիանս ի մէջ ազգիս Հայոց։ Եւ այսու կի մընամ

Գերյարգելութեան ձերում

Խոնարհ Ծառայ
Խունկիանոս Տանիէլեան
Դատաւոր Հայաքաղաքին

Գրեցի Հայոց քաղաքն
Die 21 7bre 1749

ՃԽԷ.

Հայ Պատրիարքութեանց մէկ յուզումնալից շրջանին՝ Լամբրոնացւոյ Ատենապանութեան տպագրութիւնը արգելքի տակ կ՚առնուի։

Գերապայծառ և Գերայարգոյ Տեառն Տեառն
Եղիայի Վարդապետի փոխանորդի արքայի խնդալ ի տէր

... Դարձեալ յայտ լիցի տէրութեանդ վասն նալողլու յակոբ պատրիարգին, զի հանին զնա ի պատրիարգութենէ, և արարին զնա երուսաղեմի պատրիարգ, և հազիւ առաքեցին զնա յիզմիր, զի անտի գնասցէ ի տեղի իւր, զի ոչ կամէր թողուլ զկոստանդինուպոլիս և ի տեղի նորա եդին զմինաս վարդապետն պատրիարգ։ Եւ յառաջ յարութիւն վարդապետն էր փոխանորդ պատրիարգին մինչև ի գալ նորա, յորոյ ժամանակս ետուն տպել զատենաբանութիւն լամբրոնացւոյն. բայց յետոյ ամբաստանութիւն եղեալ վասն այսորիկ, արգելեցին վաճառել. այլ ես զմինն գնեցի վասն մերոյ մենաստանի ձեռամբ պետրոս աղային որդւոյ սարգիս աղային։ Եւ առ մինաս պատրիարգն գնացեալ ոմանք ի հակառակորդաց ասացեալ են. Տեսանե՞ս թէ որպէս համարձակ մտանեն և ելանեն ուղղափառքն յեկեղեցիս ֆռանկաց։ Եւ նա պատասխանի արարեալ է եթէ Ոչ կամիմ ես զերկու ազգս ընդդէմ միմեանց յարուցանել։...

Ցամի Տեառն 1749
Նոյեմբերի 5
[Կ. Պոլիս]

Նուաստ Ծառայ
Հ. Ստեփաննոս Վարդապետ

ՃԽԸ.

Բենեդիկտոս ԺԴ. Քահանայապետի հայասիրութեան մէկ փայլուն ապացոյցը կը պատմուի հետևեալ թուղթին մէջ։

Բարեպաշտուհի և պարկեշտակրօն Մօր իմոյ արքունի խարունիին
և քրիստոսասէր եղբարց իմոց Պետրոսին և Այուբիին

... Սրբազան փափը մէկ օր մը զամմէն հայերը կանչեց մէկ մեծկակ ժամու մը մէջ, որ մօտիկ երկու հարուր հոգի կային. ուրիշ ազգէ հիչ մարդ չի թողուց՝ որ ներս մտնէ. ֆարազի պէյեալ ըլլար. դուռը ժամուն եասախճիներ կանգներ էին. ով որ կը խոստովանէր, թէ ես հայ եմ, սալթ զնոսա կը թողէին մտնել։ Ցետոյ ժամու մէջը աթոռ նստաւ սրբազան փափը. կանչեց մեծ սիրով զհայերը իր քովը. թող տուաւ որ անոնք